ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

« ԵՔ-ԳՀԾՁԲ-19/104» ծածկագրով գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

Նիստի անցկացման՝
-վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 30 մայիսի 2019թ.
-ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մելիքսեթյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Մաթևոսյան, Լ. Վահանյան, Ա. Մուրադյան Ա. Գևորգյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

1. Գնանշման հարցման մրցույթի հրավերում փոփոխություն կատարելու մասին
(Ա. Մելիքսեթյան)

1.1 Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման 29.05.2019 թվականի հ. 23/10044 գրությունը, համաձայն որի «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/104» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել հրավերով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում կատարել համապատասխան փոփոխություններ, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և 29-րդ հոդվածի 4-րդ մասերով, որոշեց հրավերում կատարել համապատասխան փոփոխություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Գնման առարկա է հանդիսանում Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում առկա արխիվացման ենթակա մշտական պահպանության փաստաթղթերի գիտահետազոտական մշակում՝ <Արխիվի գործի մասին> ՀՀ օրենքի պահանջներին համաձայն և պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի մշակում՝ համաձայն <Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը հաստատելու մասին> ՀՀ կառավարության 04.04.2019թ. N 397-Ն որոշման:
Փաստաթղթերը՝ ըստ գործերի, պետք է կարվեն և էջերը համարակալվեն: Փաստաթղթերը ըստ կարգի դասավորվեն, առանձնացվեն պահպանության ենթակա փաստաթղթերը ոչնչացվողներից, արխիվ ի պահ տեղափոխվողներից: Ոչնչացման և արխիվ ի պահ տեղափոխման ենթակա փաստաթղթերի համար կազմել առաձին ակտեր՝ սահմանված ՀՀ Կառավարության 23.06.2005թ. N 932-Ն որոշմամբ:
Յուրաքանչյուր գործի կազմի վրա պետք է նշվի գործի անվանումը, համարը, ժամանակահատվածը:
Փաստաթղթերի /մշտական պահպանության և ոչնչացման/ արխիվացման աշխատանքները պետք է իրականացվեն այն կազմողի սեփական ուժերով և միջոցներով:
Արխիվացման ենթակա գործերի ընդհանուր քանակը՝ 2500 գործ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Գնանշման հարցման մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
(Ա. Մելիքսեթյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
2. Բաց մրցույթի հրավերի փոփոխված տեքստը հաստատելու մասին.
3. Բաց մրցույթի հայտարարության փոփոխված տեքստը հաստատելու մասին.

4. Բաց մրցույթի հայտարարության և հրավերի ռուսերեն լեզվով տեքստը հաստատելու մասին.
5.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

3. Գնանշման հարցման փոփոխված (հայերենով) և ռուսերենով հրավերների տեքստերը հաստատելու մասին

(Ա. Մելիքսեթյան)

Հանձնաժողովը որոշեց՝ հաստատել փոփոխված (հայերենով) և ռուսերենով հրավերների տեքստերը

4. Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

5. Գնանշման հարցման փոփոխված (հայերենով) և ռուսերենով հայտարարությունների տեքստերը հաստատելու մասին

(Ա. Մելիքսեթյան)

Հանձնաժողովը որոշեց՝ հաստատել փոփոխված (հայերենով) և ռուսերենով հայտարարությունների տեքստերը

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

6. Գնանշման հարցման հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Մելիքսեթյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հայտերի բացման նպատակով հանձնաժողովի նիստ հարավիրել հայտարարությունը հրապարակվելու օրվանից՝ հունիսի 10-ին, ժամը 10:00-ին, ք. Երևան, Արգիշտի փողոց 1 հասցեում՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի 321 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա. Մելիքսեթյան
Անդամներ՝		Ե. Մաթևոսյան
		Լ. Վահանյան
		Ա. Մուրադյան
		Մ. Խաչատրյան
Քարտուղար՝		Ի. Եղիազարյան